

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ 2012-2013 Թ.Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

ՔՐԵԱԿԱՆ ՈԼՈՐՏ

(քրեական գործեր, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող միջնորդություններ)

2013 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացվել է 4039 քրեական գործ, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին ու դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող 17777 միջնորդություն (ընդհանուրը՝ $4039+17777=21816$):

Ստացված 4039 քրեական գործից ավարտվել է 3204-ը (79,3%):

Ստացված 17777 միջնորդություններից ավարտվել է 17356-ը (97,6%):

(Ընդհանուր առմամբ ավարտվել է 20560 դատական գործ ($3204+17356=20560$) 94.2%):

Համեմատության կարգով նշենք, որ 2012 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացվել է 4246 քրեական գործ, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին ու դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող 14744 միջնորդություն (ընդհանուրը՝ $4246+14744=18990$):

Ստացված 4246 քրեական գործից ավարտվել է 3281-ը (77%):

Ստացված 14744 միջնորդություններից ավարտվել է 14533-ը (98,6%):

(Ընդհանուր առմամբ ավարտվել է 17814 դատական գործ ($3281+14533=17814$) 93%):

2013 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարանների կողմից ավարտված 3204 քրեական գործերով դատական ակտ է կայացվել 4353 անձի վերաբերյալ, այդ թվում՝ 2788 գործով (87%) կայացվել է դատավճիռ՝ 3894 անձի նկատմամբ, 370 գործով (11,5%) կայացվել է քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում՝ 413 անձի վերաբերյալ, 46 գործով (1,5%)՝ 46 անմեղսունակ անձանց վերաբերյալ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ:

Համեմատության կարգով նշենք, որ 2012 թվականի ընթացքում ՀՀ առաջին առյանի դատարանների կողմից ավարտված 3281 քրեական գործերով դատական ակտ է կայացվել 4391 անձի վերաբերյալ, այդ թվում՝ 3089 գործով (94,1%) կայացվել է դատավճիռ՝ 4156 անձի նկատմամբ, 163 գործով (5%) կայացվել է քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում՝ 206 անձի վերաբերյալ, 29 գործով (0,9%)՝ 29 անմեղսունակ անձանց վերաբերյալ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ:

2013 թվականի ընթացքում լրիվ կամ մասնակի արդարացվել է 96 (65+31=96) 2,5% ($96:3894*100=2,5\%$) անձ, որից 65-ը ($65:3894*100=1,7\%$)՝ լրիվ, իսկ 31-ը ($31:3894*100=0,8\%$)՝ մասնակի:

Համեմատության կարգով նշենք, որ 2012 թվականի ընթացքում լրիվ կամ մասնակի արդարացվել է 84 (57+27=84) 2% ($84:4156*100=2\%$) անձ, որից 57-ը ($57:4156*100=1,4\%$)՝ լրիվ, իսկ 27-ը ($27:4156*100=0,6\%$)՝ մասնակի:

2013 թվականի ընթացքում դատապարտվել է 3829 (3894-65=3829) 98,3% ($3829:3894*100=98,3\%$) անձ:

2013 թվականի ընթացքում դատապարտված 3829 անձանցից ազատազրկման ձևով ռեալ պատիժ է նշանակվել 2179 (57%) անձի նկատմամբ: Պատիժը պայմանականորեն չի կիրառվել 818 անձի նկատմամբ ($818:3829*100=21,4\%$):

Համեմատության կարգով նշենք, որ 2012 թվականի ընթացքում դատապարտվել է 4099 (4156-57=4099) 98,6% ($4099:4156*100=98,6\%$) անձ:

2012 թվականի ընթացքում դատապարտված 4099 անձանցից ազատազրկման ձևով ռեալ պատիժ է նշանակվել 2193(53,5%) անձի նկատմամբ: Պատիժը պայմանականորեն չի կիրառվել 762 անձի նկատմամբ ($762:4099*100=18,6\%$):

Այսպիսով, 2013 թվականի ընթացքում՝ 2012 թվականի համեմատությամբ, դատարաններում ստացված քրեական գործերի քանակը նվազել է 207-ով ($4246-4039=207$) 4.9% ($207:4246*100=4.9\%$), ըստ ավարտված գործերի՝ դատի տրված անձանց թիվը նվազել է 38-ով ($4391-4353=38$) 0,9% ($38:4391*100=0,9\%$): Անձանց թիվը, որոնց նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, աճել է 56-ով ($818-762=56$) 7,3% ($56:762*100=7,3\%$), դատապարտվածների թիվը նվազել է՝ 270-ով ($4099-3829=270$)

6,6% ($270:4099*100=6,6\%$), իսկ արդարացվածների թիվն աճել է 12-ով ($96-84=12$) 14,3% ($12:84*100=14,3\%$):

Հարկ է նշել, որ ինչպես 2012 թվականին, այնպես էլ 2013 թվականին դատապարտված անձանց թվում որոշակի նվազումներով հանդերձ զգալի թիվ են կազմել գողության, խարդախության, յուրացնելու կամ վատնելու համար դատապարտվածները:

Այսպես.

- 2012 թվականի ընթացքում գողության համար (ՀՀ քր. օր. 177-րդ հոդված) դատապարտվել է 584 անձ (դատապարտվածների թվի 14,2%-ը, $584:4099*100=14,2\%$), խարդախության համար (ՀՀ քր. օր. 178-րդ հոդված)՝ 134 անձ (դատապարտվածների թվի 3,3%-ը, $134:4099*100=3,3\%$), յուրացնելու կամ վատնելու համար (ՀՀ քր. օր. 179-րդ հոդված)՝ 56 անձ (դատապարտվածների թվի 1,4%-ը, $56:4099*100=1,4\%$):

- 2013 թվականի ընթացքում գողության համար (ՀՀ քր. օր. 177-րդ հոդված) դատապարտվել է 499 անձ (դատապարտվածների թվի 13%-ը, $499:3829*100=13\%$), խարդախության համար (ՀՀ քր. օր. 178-րդ հոդված)՝ 145 անձ (դատապարտվածների թվի 3,8%-ը, $145:3829*100=3,8\%$), յուրացնելու կամ վատնելու համար (ՀՀ քր. օր. 179-րդ հոդված)՝ 82 անձ (դատապարտվածների թվի 2,1%-ը, $82:3829*100=2,1\%$):

Այսպիսով, 2013 թվականի ընթացքում՝ 2012 թվականի համեմատությամբ, գողության համար դատապարտվածների թիվը նվազել է 85-ով ($584-499=85$) 14,5% ($85:584*100=14,5\%$), խարդախության համար դատապարտվածների թիվն աճել է 11-ով ($145-134=11$) 8,2% ($11:134*100=8,2\%$), յուրացնելու կամ վատնելու համար դատապարտվածների թիվն աճել է 26-ով ($82-56=26$) 46,4% ($26:56*100=46,4\%$):

Ի դեպ, զգալի նվազում է արձանագրվել նաև համեմատվող ժամանակահատվածում դիտարկված ներքոհիշյալ հանցագործությունների համար դատապարտվածների թվում:

Այսպես.

- Խուլիգանության համար (ՀՀ քր. օր. 258-րդ հոդված) 2012 թվականին դատապարտվել է 299 անձ, իսկ 2013 թվականին՝ 178, նվազումը՝ 121 ($299-178=121$) անձ (40,5%):

- Սպանության համար (ՀՀ քր. օր. 104-րդ հոդված) 2012 թվականին դատապարտվել է 43 անձ, իսկ 2013 թվականին՝ 32, նվազումը՝ 11 ($43-32=11$) անձ (25,6%):

- Ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, վարժական հավաքներից կամ զորահավաքներից խուսափելու համար (ՀՀ քր. օր. 327-րդ հոդված) 2012 թվականին դատապարտվել է 21 անձ, իսկ 2013 թվականին՝ 6, նվազումը՝ 15 ($21-6=15$) անձ (71,4%):

- Ձինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում խախտելու համար (ՀՀ քր. օր. 359-րդ հոդված) 2012 թվականին դատապարտվել է 302 անձ, իսկ 2013 թվականին՝ 300, նվազումը՝ 2 ($302-300=2$) անձ (0,7%):

Հիշյալ հանցագործության թվի ներկայացումը հատկանշական է այն առումով, որ 2012 թվականին այս հանցագործության կատարման զգալի աճ էր նկատվել, մասնավորապես՝ 2011 թվականին դատապարտվել է 195 անձ, իսկ 2012 թվականին՝ 302, աճը՝ 107 ($302-195=107$) անձ (54,9%):

- Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու համար (ՀՀ քր. օր. 116-րդ հոդված) 2012 թվականին դատապարտվել է 20 անձ, իսկ 2013 թվականին՝ 2, նվազումը՝ 18 ($20-2=18$) անձ (90%):

Հիշյալ հանցագործության թվի ներկայացումը հատկանշական է այն առումով, որ 2012 թվականին այս հանցագործության կատարման զգալի աճ էր նկատվել, մասնավորապես՝ 2011 թվականին դատապարտվել է 8 անձ, իսկ 2012 թվականին՝ 20, աճը՝ 12 ($20-8=12$) անձ (150%):

- Ծեծի համար (ՀՀ քր. օր. 118-րդ հոդված) 2012 թվականին դատապարտվել է 56 անձ, իսկ 2013 թվականին՝ 29, նվազումը՝ 27 ($56-29=27$) անձ (48,2%):

Հիշյալ հանցագործության թվի ներկայացումը հատկանշական է այն առումով, որ 2012 թվականին այս հանցագործության կատարման զգալի աճ էր նկատվել, մասնավորապես՝ 2011 թվականին դատապարտվել է 31 անձ, իսկ 2012 թվականին՝ 56, աճը՝ 25 ($56-31=25$) անձ (80,6%):

- Առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության համար (ՀՀ քր. օր. 268-րդ հոդված) 2012 թվականին դատապարտվել է 408 անձ, իսկ 2013 թվականին՝ 322, նվազումը՝ 86 ($408-322=86$) անձ (21,1%):

Հիշյալ հանցագործության թվի ներկայացումը հատկանշական է այն առումով, որ 2012 թվականին այս հանցագործության կատարման զգալի աճ էր նկատվել, մասնավորապես՝ 2011 թվականին դատապարտվել է 347 անձ, իսկ 2012 թվականին՝ 408, աճը՝ 61 ($408-347=61$) անձ (17,6%):

Միաժամանակ, աճ է արձանագրվել ստորև ներկայացվող՝ դիտարկված հանցագործությունների համար դատապարտվածների թվում:

Այսպես.

- Իշխանությունը չարաշահելու, իշխանազանցության կամ իշխանության անգործության համար (ՀՀ քր. օր. 375-րդ հոդված) 2012 թվականին դատապարտվել է 79 անձ, իսկ 2013 թվականին՝ 101, աճը՝ 22 ($101-79=22$) անձ (28%):

- Իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու համար (ՀՀ քր. օր. 316-րդ հոդված) 2012 թվականին դատապարտվել է 37 անձ, իսկ 2013 թվականին՝ 38, աճը՝ 1 ($38-37=1$) անձ (3%): Հիշյալ հոդվածով ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 2011 թվականին դատապարտվել է 61 անձ:

- Ավազակության համար (ՀՀ քր. օր. 175-րդ հոդված) 2012 թվականին դատապարտվել է 37 անձ, իսկ 2013 թվականին՝ 44, աճը՝ 7 ($44-37=7$) անձ (19%):

- Շորթման համար (ՀՀ քր. օր. 182-րդ հոդված) 2012 թվականին դատապարտվել է 6 անձ, իսկ 2013 թվականին՝ 18, աճը՝ 12 ($18-6=12$) անձ (200%):

- Մարդուն առևանգելու համար (ՀՀ քր. օր. 131-րդ հոդված) 2012 թվականին դատապարտվել է 48 անձ, իսկ 2013 թվականին՝ 86, աճը՝ 38 ($86-48=38$) անձ (79,1%):

- Փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր, տրանսպորտային միջոցների պետհամարանիշներ կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու համար (ՀՀ քր. օր. 325-րդ հոդված) 2012 թվականին դատապարտվել է 46 անձ, իսկ 2013 թվականին՝ 69, աճը՝ 23 ($69-46=23$) անձ (50%):

- Սուտ մատնության համար (ՀՀ քր. օր. 333-րդ հոդված) 2012 թվականին դատապարտվել է 35 անձ, իսկ 2013 թվականին՝ 44, աճը՝ 9 ($44-35=9$) անձ (26%):

2013 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացված վերոհիշյալ 17777 միջնորդություններից 14530 (81,7%)-ը վերաբերվել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին, որից 3172 (21,8%)-ը ($3172:14530*100=21,8\%$) հանդիսացել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն: Նշվածից 3011-ը (94,9%) ($3011:3172*100=94,9\%$)

բավարարվել է, 153-ը (4,85%) ($153:3172*100=4,8\%$) մերժվել, իսկ 8-ը (0,25%) ($8:3172*100=0,2\%$) թողնվել է առանց քննության: Նույն ժամանակահատվածում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացվել է գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին 576 միջնորդություն, որից 129-ը (22,4%) բավարարվել է, 427-ը (74,1%)՝ մերժվել, 16-ը (2,8%)՝ թողնվել է առանց քննության, իսկ 4-ը (0,7%)՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ:

Համեմատության կարգով նշենք, որ 2012 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացված վերոհիշյալ 14744 միջնորդություններից 12502 (84,8%)-ը վերաբերվել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին, որից 2621 (21%)-ը ($2621:12502*100=21\%$) հանդիսացել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն: Նշվածից 2497-ը (95,3%) ($2497:2621*100=95,3\%$) բավարարվել է, 114-ը (4,3%) ($114:2621*100=4,3\%$) մերժվել, իսկ 10-ը (0,4%) ($10:2621*100=0,4\%$) թողնվել է առանց քննության: Նույն ժամանակահատվածում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացվել է գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին 441 միջնորդություն, որից 134-ը (30,3%) բավարարվել է, 273-ը (62%)՝ մերժվել, 31-ը (7%)՝ թողնվել է առանց քննության, իսկ 3-ը (0,7%)՝ 2012 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ:

ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՋ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում 2013 թվականի ընթացքում ստացվել է 2766 վերաքննիչ բողոք՝ 2461 դատական ակտի դեմ (*այսինքն՝ բողոքարկվել է առաջին ատյանի դատարանների կողմից կայացված դատական ակտերի ընդամենը 12%-ը* ($2461:20560*100=12\%$)): Բերված բողոքներից 1552-ով (56,1%) բողոքարկվել է քրեական գործերով կայացված գործն ըստ էության լուծող 1247 դատական ակտ, իսկ մնացած՝ 1214-ով (43,9%) բողոքարկվել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող 1214 դատական ակտ:

Քրեական գործերով բողոքարկված 1247 դատական ակտերով վերաքննիչ վարույթն ավարտվել է 1161-ով (93,1%), այդ թվում՝ 769 (66,2%) դատական ակտ թողնվել է անփոփոխ, 286-ը (24,6%)՝ բեկանվել է, 46-ը (4%) թողնվել է առանց

քննության, 60-ով (5,2%) վերաքննիչ վարույթը կարճվել է: Բեկանված 286 ակտերից 38-ով (13,3%) գործն ուղարկվել է ստորադաս դատարան՝ նոր քննության, 248-ով (86,7%) ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխվել կամ կայացվել է գործն ըստ էության լուծող նոր դատական ակտ:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող դատական ակտերի դեմ բերված 1214 բողոքներից բավարարվել է 114-ը (9,3%), մերժվել՝ 1022-ը (84,2%), 24-ը (2%) թողնվել է առանց քննության, 31-ով (2,5%) վերաքննիչ վարույթը կարճվել է, իսկ 23-ը (2%)՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել են անավարտ:

Բողոքարկված 2461 դատական ակտի դեմ բերված ընդհանուր 2766 բողոքներից 510-ը (18,4%) ներկայացվել է դատախազության կողմից, որոնցից 50 (9,8%) բողոքի քննություն 2013 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ: Ընթացքը լուծված 460 (510-50=460) բողոքներից 104-ը (22,6%) բավարարվել է, 336-ը (73%)՝ մերժվել, 14-ով (3,1%) վերաքննիչ վարույթը կարճվել է, իսկ 6-ով (1,3%)՝ բողոքը թողնվել է առանց քննության:

*Համեմատության կարգով նշենք, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում 2012 թվականի ընթացքում ստացվել է 2557 վերաքննիչ բողոք՝ 2245 դատական ակտի դեմ (այսինքն՝ բողոքարկվել է առաջին ատյանի դատարանների կողմից կայացված դատական ակտերի ընդամենը 12,6%-ը (2245:17814*100=12,6)): Բերված բողոքներից 1556-ով (60,9%) բողոքարկվել է քրեական գործերով կայացված գործն ըստ էության լուծող 1300 դատական ակտ, իսկ մնացած՝ 1001-ով (39,1%) բողոքարկվել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող 945 դատական ակտ:*

Քրեական գործերով բողոքարկված 1300 դատական ակտերով վերաքննիչ վարույթն ավարտվել է 1198-ով (92,2%), այդ թվում՝ 979 (81,7%) դատական ակտ թողնվել է անփոփոխ, 219-ը (18,3%)՝ բեկանվել է: Բեկանված 219 ակտերից 16-ով (7,3%) գործն ուղարկվել է ստորադաս դատարան՝ նոր քննության, 203-ով (92,7%) ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխվել կամ կայացվել է գործն ըստ էության լուծող նոր դատական ակտ:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող դատական

ակտերի դեմ բերված 1001 բողոքներից բավարարվել է 73-ը (7,3%), մերժվել՝ 798-ը (79,7%), 55-ը (5,5%) թողնվել է առանց քննության, 31-ով (3,1%) վերաքննիչ վարույթը կարճվել է, իսկ 44-ը (4,4%)՝ 2012 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել են անավարտ:

Բողոքարկված 2245 դատական ակտի դեմ բերված ընդհանուր 2557 բողոքներից 354-ը (13,8%) ներկայացվել է դատախազության կողմից, որոնցից 41 (11,6%) բողոքի քննություն 2012 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ: Ընթացքը լուծված 313 (354-41=313) բողոքներից 56-ը (17,9%) բավարարվել է, 243-ը (77,7%)՝ մերժվել, 11-ով (3,5%) վերաքննիչ վարույթը կարճվել է, իսկ 3-ով (0,9%)՝ բողոքը թողնվել է առանց քննության:

*Այսպիսով, 2013 թվականի ընթացքում 33 վերաքննիչ քրեական դատարանում ստացված բողոքների ընդհանուր թիվն աճել է 209-ով (2766-2557=209) 8,2% (209:2557*100=8,2%), այդ թվում՝ քրեական գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ բերված բողոքների թիվը նվազել է 4-ով (1556-1552=4) 0,2% (4:1556*100=0,2%), մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող դատական ակտերի դեմ բերված բողոքների թիվն աճել է 213-ով (1214-1001=213) 21,3% (213:1001*100=21,3%):*

Քրեական գործերով ավարտված վերաքննիչ վարույթների թիվը նվազել է 37-ով (1198-1161=37) 3,1%, անփոփոխ թողնված դատական ակտերի թիվը նվազել է 210-ով (979-769=210) 21,4%, իսկ բեկանվածների թիվն աճել է 67-ով (286-219=67) 30,6%:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերվող դատական ակտերի դեմ բերված բողոքներից բավարարվածների թիվն աճել է 41-ով (114-73=41) 56,2%, մերժվածների թիվն աճել է՝ 224-ով (1022-798=224) 28,1%, առանց քննության թողնվածների թիվը նվազել է 31-ով (55-24=31) 56,4%, վերաքննիչ վարույթի կարճումների քանակը մնացել է նույնը՝ 31:

Այսպիսով, բերված բողոքների ընդհանուր թիվն աճել է 209-ով (2766-2557=209) 8,2%, ավարտված վերաքննիչ վարույթների արդյունքում բավարարված բողոքների ընդհանուր թիվն աճել է 108-ով ((286+114=400)-(219+73=292)=108)) 37%, իսկ մերժվածների թիվը՝ 14-ով ((769+1022=1791)-(979+798=1777)=14)) 0,8%:

Դատախազության կողմից բերված բողոքների ընդհանուր թիվն աճել է 156-ով (510-354=156) 44,1% (156:354*100=44,1%), այդ թվում՝ ավարտված վերաքննիչ

վարույթների արդյունքում բավարարված բողոքների թիվն աճել է 48-ով (104-56=48) 86%, իսկ մերժվածների թիվը՝ 93-ով (336-243=93) 38,3%:

Այսպիսով, ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2013 թվականի ընթացքում ավարտված գործերով կայացված 20560 (3204+17356=20560) դատական ակտերից բողոքարկվել է 2461-ը՝ 12% (2461:20560*100=12%), որից բեկանվել է 393-ը (286+114-7=393) 16% /400-7=393, նշված 7 թիվը կազմում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից կայացված թվով 7 դատական ակտերը բեկանելու և առաջին ատյանի դատարանի դատական ակտերին օրինական ուժ տալու դեպքերին), այսինքն՝ ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2013 թվականի ընթացքում ավարտված գործերի կայունությունը կազմում է 98,1% (20560-393=20167:20560*100=98,1%), իսկ բողոքարկված գործերի կայունությունը կազմում է 84% (2461-393=2068:2461*100=84%):

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատում 2013 թվականի ընթացքում ստացվել է 1253 վճռաբեկ բողոք, որոնցով բողոքարկվել է 1082 դատական ակտ:

Բերված 1253 բողոքներից 1045-ը (83,4%) վերադարձվել է՝ 921 որոշմամբ, 62-ն (5%) ընդունվել է վարույթ, 44-ը (3,5%)՝ թողնվել է առանց քննության, 2-ը դիտվել է որպես դիմում, 100 (8%) բողոքի ընթացքը 2013 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ:

Վարույթ ընդունված 62 բողոքներից՝

- 7-ը (վարույթ ընդունվածի 11,3%, ընդհանուր բողոքների 0,56%) մերժվել է,

- 23-ը (վարույթ ընդունվածի 37,1%, ընդհանուր բողոքների 1,84%) բավարարվել է ամբողջությամբ,

- 29-ը (վարույթ ընդունվածի 46,8%, ընդհանուր բողոքների 2,32 %)՝ բավարարվել է մասնակի,

- 3-ի ընթացքը (վարույթ ընդունվածի 4,8%, ընդհանուր բողոքների 0,25%) ընթացքը 2013 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ:

Ընդ որում, ամբողջությամբ բավարարված հիշյալ 23 բողոքներից 7-ով բեկանվել է վերաքննիչ դատարանի դատական ակտը և օրինական ուժ է տրվել առաջին ատյանի դատարանի դատական ակտին:

- Բերված 1253 բողոքներից 154-ը (12,3%) ներկայացվել է ՀՀ գլխավոր դատախազության կողմից, որից 23-ն (14,9%) ընդունվել է վարույթ, 121-ը (78,6%) վերադարձվել է, իսկ 10-ի (6,5%) ընթացքը 2013 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ: Վարույթ ընդունված 23 բողոքներից 15-ը բավարարվել է ամբողջությամբ, 4-ը բավարարվել է մասնակի, 4-ը մերժվել է:

- Բերված 1253 բողոքներից 1099-ը (87,7%) ներկայացվել է դատավարության այլ մասնակիցների կողմից, որից 39-ն (3,5%) ընդունվել է վարույթ, 924-ը (84,1%) վերադարձվել է, 44-ը (4%) թողնվել է առանց քննության, 2-ը դիտվել է որպես դիմում, իսկ 90-ի (8,2%) ընթացքը 2013 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ: Վարույթ ընդունված 39 բողոքներից 8-ը բավարարվել է ամբողջությամբ, 25-ը բավարարվել է մասնակի, 3-ը մերժվել է, իսկ 3-ի ընթացքը 2013 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ:

Համեմատության կարգով նշենք, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատում 2012 թվականի ընթացքում ստացվել է 1231 վճռաբեկ բողոք, որոնցով բողոքարկվել է 1067 դատական ակտ:

Բերված 1231 բողոքներից 991-ը (80,5%) վերադարձվել է՝ 886 որոշմամբ, 72-ն (5,8%) ընդունվել է վարույթ, 51-ը (4,2%)՝ թողնվել է առանց քննության, 2-ով (0,2%) մերժվել է վերանայման վարույթի հարուցումը, 115 (9,3%) բողոքի ընթացքը 2012 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ:

Վարույթ ընդունված 72 բողոքներից՝

- 16-ը (վարույթ ընդունվածի 22,2%, ընդհանուր բողոքների 1,3%) մերժվել է,
- 20-ը (վարույթ ընդունվածի 27,8%, ընդհանուր բողոքների 1,6%) բավարարվել է ամբողջությամբ,

- 29-ը (վարույթ ընդունվածի 40,3%, ընդհանուր բողոքների 2,6 %)՝ բավարարվել է մասնակի,

- 7-ի (վարույթ ընդունվածի 9,7%, ընդհանուր բողոքների 0,6 %) ընթացքը 2012 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ:

Ընդ որում, ամբողջությամբ բավարարված հիշյալ 20 բողոքներից 3-ով բեկանվել է վերաքննիչ դատարանի դատական ակտը և օրինական ուժ է տրվել առաջին ատյանի դատարանի դատական ակտին:

- Բերված 1231 բողոքներից 138-ը (11,2%.) ներկայացվել է ՀՀ գլխավոր դատախազության կողմից, որից 101-ը (73,2%) վերադարձվել է, 23-ն (16,7%) ընդունվել է վարույթ, 1-ը (0,7%) թողնվել է առանց քննության, իսկ 13-ի (9,4%) ընթացքը 2012 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ: Վարույթ ընդունված 23 բողոքներից 6-ը բավարարվել է ամբողջությամբ, 8-ը բավարարվել է մասնակի, 8-ը մերժվել է, իսկ 1-ի ընթացքը 2012 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ:

- Բերված 1231 բողոքներից 1093-ը (88,8%) ներկայացվել է դատավարության այլ մասնակիցների կողմից, որից 890-ը (81,4%) վերադարձվել է, 49-ն (4,5%) ընդունվել է վարույթ, 50-ը (4,6%) թողնվել է առանց քննության, 2-ով (0,2%) մերժվել է վերանայման վարույթի հարուցումը, իսկ 102-ի (9,3%) ընթացքը 2012 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ: Վարույթ ընդունված 49 բողոքներից 14-ը բավարարվել է ամբողջությամբ, 21-ը բավարարվել է մասնակի, 8-ը մերժվել է, իսկ 6-ի ընթացքը 2012 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ եղել է անավարտ:

Այսպիսով, 2013 թվականի ընթացքում՝ 2012 թվականի համեմատությամբ, ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատում ստացված ընդհանուր բողոքների քանակն աճել է 22-ով ($1253-1231=22$) 1,8%, բողոքարկված դատական ակտերի թիվը՝ 15-ով ($1082-1067=15$) 1,4%, վերադարձված բողոքների քանակը՝ 54-ով ($1045-991=54$) 5,4%: Վարույթ ընդունված բողոքների թիվը նվազել է 10-ով ($72-62=10$) 13,8%, մերժված բողոքների թիվը նվազել է 9-ով ($16-7=9$) 56,2%, ամբողջությամբ բավարարվածների թիվն աճել է 3-ով ($23-20=3$) 15%, իսկ մասնակի բավարարվածների թիվը մնացել է նույնը՝ 29:

Դատախազության կողմից բերված բողոքների թիվն աճել է 16-ով ($154-138=16$) 11,6%, վերադարձված բողոքների թիվն աճել է 20-ով ($121-101=20$) 19,8%, մերժվածների թիվը նվազել է 4-ով ($8-4=4$) 50%, ամբողջությամբ բավարարվածների թիվն աճել է 9-ով ($15-6=9$) 150%, իսկ մասնակի բավարարվածների թիվը նվազել է՝ 4-ով ($8-4=4$) 50%:

Դատավարության այլ մասնակիցների կողմից բերված բողոքների թիվն աճել է 6-ով ($1099-1093=6$) 0,5%: Դատավարության այլ մասնակիցների կողմից բերված բողոքներից վերադարձված բողոքների թիվն աճել է 34-ով ($924-890=34$) 3,8%, մերժվածների թիվը նվազել է 5-ով ($8-3=5$) 62,5%, ամբողջությամբ բավարարվածների

թիվը՝ 6-ով (14-8=6) 42,8%, մասնակի բավարարվածների թիվն աճել է 4-ով (25-21=4) 19%:

Այսպիսով, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում 2013 թվականի ընթացքում ավարտված գործերով կայացված 2352 (1161+1214-23=2352) դատական ակտերից վճռաբեկության կարգով բողոքարկվել է 1082-ը (46%), որոնցից բեկանվել է 52-ը (23+29=52) 4,8%, այսինքն՝ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանում 2013 թվականի ընթացքում ավարտված գործերի կայունությունը կազմում է 97,8% ($2352-52=2300:2352*100=97,8\%$), իսկ բողոքարկված դատական ակտերի կայունությունը կազմում է 95,2% ($1082-52=1030:1082*100=95,2\%$):

Այսպիսով, քրեական գործերով և միջնորդություններով ընդհանուր կայունությունը կազմում է 97,8% (Քայլ 1-ին՝ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի կողմից բեկանված դատական ակտերի թիվը՝ 393-ը ($400-7=393$, նշված 7 թիվը կազմում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 7 դատական ակտերը բեկանելու և առաջին ատյանի դատարանի դատական ակտերին օրինական ուժ տալու դեպքերին), գումարվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից բեկանված դատական ակտերի թվին՝ 52-ին, ստացվել է 445 բեկանված դատական ակտ: Քայլ 2-րդ՝ ընդհանուր իրավասության դատարաններում ավարտված դատական ակտերի թվից՝ 20560-ից, հանվել է բեկանված դատական ակտերի թիվը՝ 445-ը, ստացվել է 20115, այսինքն՝ 20115 դատական ակտ մնացել է օրինական ուժի մեջ, ուստի դատական ակտերի ընդհանուր կայունությունը կազմում է 97,8% ($20560-445=20115:20560*100=97,8\%$):

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

2013 թվականի ընթացքում ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում ստացվել է 48540 քաղաքացիական գործ, որից՝

- 4152 գործով /8,6%/ հայցադիմումը վերադարձվել է,
- 269 գործով /0,5%/ հայցադիմումի ընդունումը մերժվել է,

- 44119 /90,9%/ գործով հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Վարույթ ընդունված 44119 գործերից`

- 28222-ով /64%/ կայացվել են վճիռներ, այդ թվում` հայցի լրիվ բավարարմամբ` 17599-ը /վճիռների 62,3%/, հայցի մասնակի բավարարմամբ` 2493-ը /վճիռների 8,8%/, հայցի մերժմամբ` 2819-ը /վճիռների 10%/, վարույթի կարճմամբ` 5311-ը /վճիռների 18,9%/, ընդ որում` կարճված վճիռներից 911-ով /վճիռների 3,2%/ հաստատվել է կնքված հաշտության համաձայնությունը,

(ընդհանուր առմամբ կայացվել է 32687 դատական ակտ` 4152+269+28222+44),

- 44 հայց թողնվել է առանց քննության,

- 207 գործ ուղարկվել է ըստ ընդդատության, 203 գործ միացվել է մեկ վարույթում,

- 15443-ը` /վարույթ ընդունված գործերի 35%/ անավարտ է:

Համեմատության կարգով նշենք, որ ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2012 թվականի ընթացքում ստացվել է ստացվել է 42105 քաղաքացիական գործ, որից`

- 3158 գործով /7,5%/ հայցադիմումը վերադարձվել է,

- 239 գործով /0,6%/ հայցադիմումի ընդունումը մերժվել է,

- 38708 /91,9%/ գործով հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Վարույթ ընդունված 38708 գործերից`

- 26100-ով /67,4%/ կայացվել են վճիռներ, այդ թվում` հայցի լրիվ բավարարմամբ` 15180-ը /վճիռների 58,2%/, հայցի մասնակի բավարարմամբ` 2386-ը /վճիռների 9,1%/, հայցի մերժմամբ` 2810-ը /վճիռների 10,8%/, վարույթի կարճմամբ` 5724-ը /վճիռների 21,9%/, ընդ որում` կարճված վճիռներից 1631-ով /վճիռների 5,5%/ հաստատվել է կնքված հաշտության համաձայնությունը,

(ընդհանուր առմամբ կայացվել է 29550 դատական ակտ` 3158+239+26100+53),

- 53 հայց թողնվել է առանց քննության,

- 186 գործ ուղարկվել են ըստ ընդդատության, 31 գործ միացվել են մեկ վարույթում,

- 12338-ը` /վարույթ ընդունված գործերի 31,9%/ փոխանցվել 2013 թվական:

Այսպիսով, 2013 թվականի ընթացքում առաջին ատյանի դատարաններում քաղաքացիական գործերի թիվն ավելացել է 6435-ով /48540-42105=6435/ մոտ 15,3%-

ով $/6435:42105*100=15,3\%$: Հայցադիմումի ընդունումը մերժելու որոշումների թիվն ավելացել է 30-ով $/269-239=30/$ մոտ 12,5%: Վերադարձված հայցադիմումների թիվն ավելացել է 994-ով $/4152-3158=994/$ մոտ 31,4%:

Այսպիսով, 2013 թվականի ընթացքում կայացված 28222 վճիռներով կողմերի միջև հաշտության համաձայնություն է կնքվել 911-ով՝ 3,2%-ով, այսինքն՝ մոտ 31 քաղաքացիական գործից 1-ն ավարտվել է հաշտության համաձայնությամբ, 2012 թվականի ընթացքում կայացված 29550 դատական ակտերով կողմերի միջև հաշտության համաձայնություն է կնքվել 1631-ով՝ 5,5%-ով, այսինքն՝ կողմերի միջև հաշտության համաձայնությունները կտրուկ նվազել են:

ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՉԱԿԵԼՈՒ ԴԻՄՈՒՄՆԵՐ

ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2013 թվականի ընթացքում ստացվել է 58176 վճարման կարգադրություն արձակելու դիմում, մինչդեռ 2012 թվականի ընթացքում ստացվել է 31036 վճարման կարգադրություն արձակելու դիմում: Այսինքն՝ ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2012 թվականին ստացված վճարման կարգադրությունների թիվն աճել է 27140-ով $(58176-31036=27140)$ 87,4%:

ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐ

ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2013 թվականի ընթացքում ստացվել է 3376 սնանկության վերաբերյալ դիմում, մինչդեռ 2012 թվականի ընթացքում՝ 2953 դիմում: Այսինքն՝ ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2013 թվականին ստացված սնանկության վերաբերյալ դիմումների թիվն աճել է 423-ով $(3376-2953=423)$ 14,3%:

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

2013 թվականի ընթացքում ՀՀ վարչական դատարանում ստացվել է 24893 գործ, որից՝

- 823 գործով $/3,3\%$ հայցադիմումը վերադարձվել է,

- 390 գործով /1,6%/ հայցադիմումի ընդունումը մերժվել է,

- 23680 գործ /95,1%/ ընդունվել է վարույթ:

Վարույթ ընդունված 23680 գործերից`

- 14873-ով /62,8% կայացվել են վճիռներ, այդ թվում` հայցի լրիվ բավարարմամբ` 5669-ը /վճիռների 38,1%/, հայցի մասնակի բավարարմամբ` 2179-ը /վճիռների 14,6%/, հայցի մերժմամբ` 1186-ը /վճիռների 8%/, վարույթի կարճմամբ` 5839-ը /վճիռների 39,3%/, ***(ընդհանուր առմամբ կայացվել է 16086 դատական ակտ` 823+390+14873)***.

- 8807-ը` /ստացված գործերի 35,4%, վարույթ ընդունված գործերի 37,2%/ անավարտ է:

Համեմատության կարգով նշենք, որ ՀՀ վարչական դատարանում 2012 թվականի ընթացքում ստացվել է 19982 գործ, որից`

- 763 գործով /3,8%/ հայցադիմումը վերադարձվել է,

- 471 գործով /2,4%/ հայցադիմումի ընդունումը մերժվել է,

- 18748 գործ /93,8%/ ընդունվել է վարույթ:

